# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԴԵՄ Է ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻՆ

30.06.2023 14:22

Շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածն առաջարկվում է լրացնել 1.1 մասով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը դասվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:»:

Նախագծի հիմնավորումները հատկապես կառուցված են նախաքննական մարմինների ծանրաբեռնվածության և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի վրա:

**Նշված հիմնավորումներով ոչ միայն չի արդարացվում օրենսդրական նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, այլ նաև դրանք խնդրահարույց են հետևյալ պատճառաբանությամբ.**

Ակնհայտ է, որ քննարկվող հիմքով մինչդատական վարույթում պատասխանատվությունից կարող է ազատել դատախազը, ինչը նշանակում է, որ նշված գործընթացը դուրս է մնալու դատական որևէ երաշխիքից և դառնալու է անվերահսկելի: Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով քրեական վարույթի հանրային մասնակցին քրեական հետապնդումը դադարեցնելու նման հայեցողական լիազորությամբ օժտելը ոչ միայն կարող է ստեղծել անպատժելիության մթնոլորտ, այլ նաև կարող է ունենալ կոռուպցիոն ռիսկեր:

Նախաքննական մարմինների ծանրաբեռնվածությունը որևէ պարագայում չի

կարող արդարացված հիմք լինել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով գործուն զղջալու ինստիտուտը կիրառելու համար, հատկապես հաշվի առնելով այն, որ անձը կարող է նման միջնորդություն հարուցել դատարանում, ինչը որևէ կերպ չի թոթափի վկայակոչված ծանրաբեռնվածությունը։

Հարկ է նաև նշել, որ գործում զղջալու հիմքով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվությունից ազատելու առաջարկվող կարգավորումը հետադարձ ուժով կիրառման է ենթակա նաև մինչ նշված փոփոխությունը ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձանց վրա։ Այսինքն, նշված հիմքով պատասխանատվությունից ազատվելու շրջանակն ընդգրկելու է նաև զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ծանր և առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց։

Ինչ վերաբերում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի հետ զուգահեռներ անցկացնելուն, ապա հարկ է նշել, որ այն նախատեսված է պատիժ նշանակելու գլխում և ենթադրում է պատժի նշանակում, որը անձը պետք է կրի, մինչդեռ գործուն զղջալու ինստիտուտը ենթադրում է պատասխանատվությունից ազատում, ինչի արդյունքում անձը չի ենթարկվելու քրեաիրավական որևէ ներգործության։ Հետևապես, զուգահեռը տեղին չէ այն իմաստով, որ այդ ինստիտուտները նախատեսված են տարբեր գլուխներում և դրանց քրեաիրավական հետևանքները տարբեր են։

**ԳՏՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՆՇՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՌԿԱ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԼՐՋԱԳՈՒՅՆ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼ, ՀԱՏԿԱՊԵՍ ԱՅՆ ՀԱՎԱՌՄԱՄԲ, ՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԸ՝ ԲԱՑԱՌՁԱԿ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է։**

Այն հնարավորություն է ընձեռելու անվերահսկելի և ստվերային քաղաքականություն վարել ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց պատասխանատվությունից ազատելու հարցում (Օրինակ՝ սպանություն, պետական դավաճանություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարած անձանց նկատմամբ)։

Հարկ է նաև նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի ներկայիս կարգավորումներում սահմանված են պատժից ազատելու տեսակներ, որոնք

արտահայտվում են դատապարտյալի վրա որոշակի պարտականությունների սահմանմամբ, ինչն էլ անշուշտ զուգորդվում է վերջինիս իրավունքների սահմանափակմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 13)։ Հետևապես, դատարանը անհրաժեշտ հիմքերի առկայության պայմաններում կարող է կիրառել դրանցից ցանկացածը։

**Վերոգրյալն ամփոփելով ՀՀ փաստաբանների պալատը դեմ է վերոհիշյալ նախագծին։**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })